

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ՆԱԽԱԳԾԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ, ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՈՍՄ-ԳՀԱՇՁԲ-2017/1ՆԱ**

ք. Կապան

« 23 » հոկտեմբեր 2017 թ.

Սյունիքի մարզպետարանը, իդեմաշխատակազմի ղեկավար Ռ. Սարգսյանի, ով գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Սեյսմշին» ՍՊԸ-ն, իդեմս տնօրեն Ն. Բունաթյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է շինարարական աշխատանքների համար նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրի համապատասխանող աշխատանքով անհատուց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ՝

- 1) նախագծման համար հիմք հանդիսացող նախագծային առաջադրանքների տեխնիկական բնութագրերը կազմել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,
- 2) ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,
- 3) ներկայացնել շինարարական ծրագրի կատարման համար անհրաժեշտ լիցենզիային, տեխնիկական միջոցներին և աշխատանքային ռեսուրսներին ներկայացվող պահանջները,
- 4) պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնել թղթային և էլեկտրոնային տարբերակներով,
- 5) ներկայացնել ըստ աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային գրաֆիկը:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ճեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 700000 (յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, ընդ որում՝

1-ին չափաբաժնի համար 110000 (մեկ հարյուր տաս հազար) ՀՀ դրամ,

2-րդ չափաբաժնի համար 160000 (մեկ հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ,

3-րդ չափաբաժնի համար 110000 (մեկ հարյուր տաս հազար) ՀՀ դրամ,

4-րդ չափաբաժնի համար 210000 (երկու հարյուր տաս հազար) ՀՀ դրամ,

5-րդ չափաբաժնի համար 110000 (մեկ հարյուր տաս հազար) ՀՀ դրամ:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսերին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրի նշանապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4.1 Շինարարական ծրագրերի կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննական եզրակացություն ունեցող նախագծային փաստաթղթերի ամփոփ նախահաշվով չնախատեսված աշխատանքների ծախսերի համար նախատեսված չափը, ներառյալ ավելացված արժեքի հարկը, գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների չափին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննական եզրակացություն ունեցող նախագծային փաստաթղթերի աշխատանքների ամփոփ նախահաշվով չնախատեսված աշխատանքների ծախսերի համար նախատեսված չափը, ներառյալ ավելացված արժեքի հարկը, գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների հանրագումարի չափին:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի

իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ լանձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որիմաստով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ կրացում են կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

7.7 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի ինտոչիվերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել եկանգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ

համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.10 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.11 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են քանակցությունների միջոցով: Համաձայնությամբ ունենալով չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.12 Պայմանագիրը կազմված է 19 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ԿԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմ
Ք. Կապան, Գ. Նժդեհ 1
Հ/Հ՝ 900311080049
ՀՎՀՀ՝ 09415375
Երևանի թիվ 1 ԳԲ
Աշխատակազմի ղեկավար՝
Ռ. Սարգսյան


(ստորագրություն)



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Սեյսմշին» ՍՊԸ
Արարատի մարզ, ք. Արտաշատ,
Օգոստոսի 23 փ, 21/3ա
Հ/Հ՝ 163048109645
ՀՎՀՀ՝ 04227903
Տնօրեն՝ Ն. Բունիաթյան

(ստորագրություն)



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳԼՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

«Ղ դրամ

Աշխատանքի							կատարման	
							հասցեն	ժամկետը
1	71241200/3	Շին. Աշխատանքների նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում	հատ	110000	110000	1	«Ղ Սյունիքի մարզ, Նորաշենիկ համայնք	10.11.2017թ
2	71241200/3	Շին. Աշխատանքների նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում	հատ	160000	160000	1	«Ղ Սյունիքի մարզ, Խղրանց համայնք	10.11.2017թ
3	71241200/3	Շին Աշխատանքների նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում	հատ	110000	110000	1	«Ղ Սյունիքի մարզ, Արծվանիկ համայնք	10.11.2017թ
4	71241200/3	Շին. Աշխատանքների նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում	հատ	210000	210000	1	«Ղ Սյունիքի մարզ, Ծավ համայնք	10.11.2017թ
5	71241200/3	Շին. Աշխատանքների նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում	հատ	110000	110000	1	«Ղ Սյունիքի մարզ, Ույծ համայնք	10.11.2017թ

Չափաբաժին 1

«Սյունիքի մարզի Նորաշենիկ համայնքի մշակույթի տան տանիքի վերանորոգման նախագծային աշխատանքներ»

Ծրագրի անվանումը

«Սյունիքի մարզի Նորաշենիկ համայնքի մշակույթի տան տանիքի վերանորոգում»

Ֆինանսավորման աղբյուր

«Կառավարության 24.08.2017թ N 1070-Ն որոշում»

Պատվիրատու

«Սյունիքի մարզպետարան»

Աշխատանքների անվանումը

«Սյունիքի մարզի Նորաշենիկ համայնքի մշակույթի տան տանիքի վերանորոգման նախագծային աշխատանքներ»

Աշխատանքի փեսակը

Վերանորոգման աշխատանքներ

Նախագծման փուլը

Աշխատանքային նախագիծ

Ընդհար դրույներ

- Նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմել կառավարության 19.03.2015թ. թիվ 596-Ն որոշմամբ «Սյունիքի մարզի Նորաշենիկ համայնքի մշակույթի տան տանիքի վերանորոգման նախագծային աշխատանքների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և «Սյունիքի մարզի Նորաշենիկ համայնքի մշակույթի տան տանիքի վերանորոգման նախագծային աշխատանքներ մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» պահանջներին համապատասխան: «Սյունիքի մարզի Նորաշենիկ համայնքի մշակույթի տան տանիքի վերանորոգման նախագծային աշխատանքներ»
- Նախահաշիվը կազմել «Սյունիքի մարզի Նորաշենիկ համայնքի մշակույթի տան տանիքի վերանորոգման նախագծային աշխատանքներ» կառավարության 23.06.2011թ.-ի թիվ 879-Ն որոշմամբ սահմանված կարգի համապատասխան:
- Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է կազմվեն և ներկայացվեն հայերեն լեզվով, հինգ թղթային օրինակով և մեկ էլեկտրոնային տարբերակով:
- Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է պատրաստված լինեն համակարգչային համապատասխան ծրագրերի կիրառման միջոցով, լինեն ընթեռնելի:

**Հիմնական պարտականություններ
և պահանջներ**

Հիմնական պարտականություններ՝

1. հետազննման աշխատանքների իրականացում,
2. նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում,

Հեղազննման վերաբերյալ պահանջներ՝

- հետազննումն իրականացնել նախագծային փաստաթղթերը մշակելու անհրաժեշտ ծավալով,
- հետազննման ընթացքում իրականացնել շենքի տանիքի առկա վիճակի տեսանկարահանում:

Նախագծի նկատմամբ պահանջներ

- Նախագծային փաստաթղթերը պետք է համապատասխանեն ՀՀ պետական ստանդարտներին, հրահանգներին, քաղաքաշինական նորմերին:
- Նախագծի մեջ պետք է նախատեսել առնվազն հետևյալ աշխատանքները՝
- ✓ *Տանիքի հեղազննում,*
- ✓ *Գրանիքաձածկի վերակառուցում, փոխում (ըստ անհրաժեշտության),*
- ✓ *Գրանիքի ջրահեռացման համակարգի վերականգնում/վերակառուցում / նորոգում / կառուցում (ըստ անհրաժեշտության),*

Նախագծի կազմի նկատմամբ պահանջներ՝

- ✓ Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է ներառեն՝
- ✓ Ելակետային տվյալներ՝ ճարտարապետահատակագծային և նախագծային առաջադրանքներ.
- ✓ Չափագրություններ
- ✓ Բացատրագրեր
- ✓ Ճարտարապետաշինարարական մաս կոնստրուկտորական մաս,
- ✓ Ծինարարության կազմակերպման նախագիծ
- ✓ նախահաշվի հիման վրա կազմված ծավալաթերթ-նախահաշիվ, որի յուրաքանչյուր աշխատանքի միավորի արժեքը կներառի ՀՀ քաղաքաշինական նորմարիվ փաստաթղթերով սահմանված բոլոր ծախսերը, շահույթը, ինչպես նաև բոլոր փոփոխությունները, վճարները և հարկերը՝ առանց նախադրված վերադարձի գումարի, կնքված և ստորագրված նախագծողի կողմից (այդ թվում հաշվի առնել չնախադրված աշխատանքների և ծախսերի 50%),
- ✓ նախահաշիվ (որն իրմեջ կներառի ամփոփ օբյեկտային և տեղային նախահաշիվներ):

Համաձայնեցումներ՝

- քաղաքաշինական պարզ փորձաքննության եզրակացությունը պետք է լինի դրական,
- նախագծային լուծումները համաձայնեցնել տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի հետ,
- տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի հետ համաձայնեցնել պահուստի, լցակույտի և շինարարական աղբի տեղերը

Նորմատիվային պահանջներ

- Նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմել քաղաքաշինական նորմերի պահանջներին համապատասխան:
- Նախահաշիվը կազմել ՀՀ կառավարության 23.06.2011թ.-ի թիվ 879-Ն որոշմամբ սահմանված կարգի համապատասխան:
- Նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմել համաձայն ՀՀ-ում գործող նորմատիվային փաստաթղթերի:

Աշխատանքի կատարման ժամկետը

սկիզբը	ավարտը
Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20-րդ օրացուցային օրը ներառյալ:

Չափաբաժին 2

«Այունիքի մարզի Խդրանց համայնքի ակումբի շենքի տանիքի վերանորոգման նախագծային աշխատանքներ»

Ծրագրի անվանումը	«Այունիքի մարզի Խդրանց համայնքի ակումբի շենքի տանիքի վերանորոգում»
Ֆինանսավորման աղբյուր	«Առավարության 24.08.2017թ N 1070-Ն որոշում»
Պատվիրատու	«Այունիքի մարզպետարան»
Աշխատանքների անվանումը	«Այունիքի մարզի Խդրանց համայնքի ակումբի շենքի տանիքի վերանորոգում»
Աշխատանքի տեսակը	Վերանորոգում
Նախագծման փուլը	Աշխատանքային նախագիծ

Ընդհանուր դրույթներ

- Նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմել «Առավարության 19.03.2015թ. թիվ 596-Ն որոշմամբ» «Առուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և «Առավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» պահանջներին համապատասխան:
- Նախահաշիվը կազմել «Առավարության 23.06.2011թ.-ի թիվ 879-Ն որոշմամբ սահմանված կարգի համապատասխան:
- Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է կազմվեն և ներկայացվեն հայերեն լեզվով, հինգ թղթային օրինակով և մեկ էլեկտրոնային տարբերակով:
- Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է պատրաստված լինեն համակարգչային համապատասխան ծրագրերի կիրառման միջոցով, լինեն ընթեռնելի:

Հիմնական պարտականություններ և պահանջներ

Հիմնական պարտականություններ՝

1. հետազննման աշխատանքների իրականացում,
2. նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում,

Հետազննման վերաբերյալ պահանջներ՝

- հետազննումն իրականացնել նախագծային փաստաթղթերը մշակելու անհրաժեշտ ծավալով,
- հետազննման ընթացքում իրականացնել շենքի տանիքի առկա վիճակի տեսանկարահանում:

Նախագծի նկարմամբ պահանջներ

- Նախագծային փաստաթղթերը պետք է համապատասխանեն «Առավարության ստանդարտներին», հրահանգներին, քաղաքաշինական նորմերին:
- ✓ Նախագծի մեջ պետք է նախատեսվե անվավեր հետևյալ աշխատանքները՝
- ✓ Տանիքի հետազննում,
- ✓ տանիքաձածկի վերակառուցում, փոխում (ըստ անհրաժեշտության),
- ✓ տանիքի ջրահեռացման համակարգի վերականգնում/վերակառուցում / նորոգում / կառուցում (ըստ անհրաժեշտության),

Նախագծի կազմին կարմամբ պահանջներ՝

- ✓ Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է ներառեն՝
- ✓ Ելակետային տվյալներ՝ ճարտարապետահատակագծային և նախագծային առաջադրանքներ.
- ✓ Չափագրություններ

- ✓ Բացատրագրեր
- ✓ Ճարտարապետաշինարարական մաս կոնստրուկտորական մաս,
- ✓ Շինարարության կազմակերպման նախագիծ
 - ✓ նախահաշվի հիման վրա կազմված ծավալաթերթ-նախահաշիվ, որի յուրաքանչյուր աշխատանքի միավորի արժեքը կներառի ՀՀ քաղաքաշինական նորմատիվ փաստաթղթերով սահմանված բոլոր ծախսերը, շահույթը, ինչպես նաև բոլոր փոփոքերը, վճարները և հարկերը՝ առանց նախատեսված վերադարձի գումարի, կնքված և ստորագրված նախագծողի կողմից (այդ թվում հաշվի առնել չնախատեսված աշխատանքների և ծախսերի 50%),
 - ✓ նախահաշիվ (որն իր մեջ կներառի ամփոփ օբյեկտային և տեղային նախահաշիվներ):

Համաձայնեցումներ՝

- քաղաքաշինական փորձաքննության եզրակացությունը պետք է լինի որակական,
- նախագծային լուծումները համաձայնեցնել տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի հետ,
- տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի հետ համաձայնեցնել պահուստի, լցակույտի և շինարարական աղբի տեղերը,

Նորմատիվային պահանջներ

- Նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմել քաղաքաշինական նորմերի պահանջներին համապատասխան Նախահաշիվը կազմել ՀՀ կառավարության 23.06.2011թ.-ի թիվ 879-Ն որոշմամբ սահմանված կարգի համապատասխան:
- Նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմել համաձայն ՀՀ-ում գործող գերատեսչական այլ նորմատիվային փաստաթղթերի:

Աշխատանքի կատարման ժամկետը

սկիզբը	ավարտը
Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20-րդ օրացուցային օրը ներառյալ:

Չափարածին 3

«Սյունիքի մարզի Արծվանիկ համայնքի դպրոցի մարզադահլիճի վերանորոգման նախագծային աշխատանքներ»

Ծրագրի անվանումը	«Սյունիքի մարզի Արծվանիկ համայնքի դպրոցի մարզադահլիճի վերանորոգում»
Տիեզերական արժեք	«Կառավարության 24. 08.2017թ N 1070-Ն որոշում»
Պարվիրատու	«Սյունիքի մարզպետարան»
Աշխատանքների անվանումը	«Սյունիքի մարզի Արծվանիկ համայնքի դպրոցի մարզադահլիճի վերանորոգման նախագծային աշխատանքներ»
Աշխատանքի տեսակը	վերանորոգում աշխատանքներ
Նախագծման փուլը	Աշխատանքային նախագիծ
Ընդհանուր դրույթներ	<ul style="list-style-type: none"> • Նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմել «Սյունիքի մարզի Արծվանիկ համայնքի դպրոցի մարզադահլիճի վերանորոգում» կառավարության 19.03.2015թ. թիվ 596-Ն որոշմամբ «Սյունիքի մարզի Արծվանիկ համայնքի դպրոցի մարզադահլիճի վերանորոգման նախագծային աշխատանքներ» կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» պահանջներին համապատասխան: • Նախահաշիվը կազմել «Սյունիքի մարզի Արծվանիկ համայնքի դպրոցի մարզադահլիճի վերանորոգում» կառավարության 23.06.2011թ.-ի թիվ 879-Ն որոշմամբ սահմանված կարգի համապատասխան: • Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է կազմվեն և ներկայացվեն հայերեն լեզվով, հինգ թղթային օրինակով և մեկ էլեկտրոնային տարբերակով: • Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է պատրաստված լինեն համակարգչային համապատասխան ծրագրերի կիրառման միջոցով, լինեն ընթերցելի:

Հիմնական պարտականություններ և պահանջներ

- Հիմնական պարտականություններ՝**
1. հետազննման աշխատանքների իրականացում,
 2. նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում,

- Հետազննման վերաբերյալ պահանջներ՝**
- հետազննումն իրականացնել նախագծային փաստաթղթերը մշակելու անհրաժեշտ ծավալով,
 - հետազննման ընթացքում իրականացնել շենքերի մարզադահլիճի առկա վիճակի տեսանկարահանում:

- Նախագծի նկարմամբ պահանջներ**
- Նախագծային փաստաթղթերը պետք է համապատասխանեն «Սյունիքի մարզի Արծվանիկ համայնքի դպրոցի մարզադահլիճի վերանորոգում» կառավարության 19.03.2015թ. թիվ 596-Ն որոշմամբ սահմանված կարգի համապատասխան:
 - ✓ Նախագծի մեջ պետք է նախատեսվեցն առնվազն հետևյալ աշխատանքները՝
 - ✓ Դռների և պարուհանների փոխում
 - ✓ նոր էլեկտրահամակարգի մոնտաժում
 - ✓ փայտյա հարակների փոխում
 - ✓ ներքին հարդարման աշխատանքներ

- Նախագծի կազմի նկարմամբ պահանջներ՝**
- ✓ Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է ներառեն՝

- ✓ Ելակետային տվյալներ՝ ճարտարապետահատակագծային և նախագծային առաջադրանքներ,
- ✓ Չափագրություններ
- ✓ Բացատրագրեր
- ✓ Ճարտարապետաշինարարական մաս կոնստրուկտորական մաս,
- ✓ նախահաշիվ (որն իր մեջ կներառի ամփոփ, օբյեկտային և տեղային նախահաշիվներ)
- ✓ Շինարարության կազմակերպման նախագիծ
 - ✓ նախահաշվի հիման վրա կազմված ծավալաթերթ-նախահաշիվ, որի յուրաքանչյուր աշխատանքի միավորի արժեքը կներառի ՀՀ քաղաքաշինական նորմատիվ փաստաթղթերով սահմանված բոլոր ծախսերը, շահույթը, ինչպես նաև բոլոր տուրքերը, վճարները և հարկերը՝ առանց նախատեսված վերադարձի գումարի, կնքված և ստորագրված նախագծողի կողմից (այդ թվում հաշվի առնել չնախատեսված աշխատանքների և ծախսերի 50%),

Համաձայնեցումներ՝

- քաղաքաշինական պարզ
փորձաքննության եզրակացությունը պետք է լինի դրական,
- նախագծային լուծումները համաձայնեցնել տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի հետ,
- տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի հետ համաձայնեցնել պահուստի, լցակույտի և շինարարական աղբի տեղերը

Նորմատիվային պահանջներ

- Նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմել քաղաքաշինական նորմերի պահանջներին համապատասխան:
- Նախահաշիվը կազմել ՀՀ կառավարության 23.06.2011թ.-ի թիվ 879-Ն որոշմամբ սահմանված կարգի համապատասխան:
- Նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմել համաձայն ՀՀ-ում գործող նորմատիվային փաստաթղթերի:

Աշխատանքի կատարման ժամկետը

սկիզբը	ավարտը
Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20-րդ օրացուցային օրը ներառյալ:

Չափաբաժին 4

Ծավ համայնքի դպրոցի մարզադահլիճի վերանորոգման նախագծային աշխատանքներ

Ծրագրի անվանումը	Ծավ համայնքի դպրոցի մարզադահլիճի վերանորոգում
Ֆինանսավորման աղբյուր	ՀՀ կառավարության 24. 08.2017թ N 1070-Ն որոշում
Պատվիրատու	ՀՀ Սյունիքի մարզպետարան
Աշխատանքների անվանումը	Ծավ համայնքի դպրոցի մարզադահլիճի վերանորոգման նախագծային աշխատանքներ
Աշխատանքի տեսակը	վերանորոգում
Նախագծման փուլը	Աշխատանքային նախագիծ
Ընդհանուր դրույթներ	<ul style="list-style-type: none"> • Նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմել ՀՀ կառավարության 19.03.2015թ. թիվ 596-Ն որոշմամբ «ՀՀ կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» պահանջներին համապատասխան: • Նախահաշիվը կազմել ՀՀ կառավարության 23.06.2011թ.-ի թիվ 879-Ն որոշմամբ սահմանված կարգի համապատասխան: • Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է կազմվեն և ներկայացվեն հայերեն լեզվով, հինգ թղթային օրինակով և մեկ էլեկտրոնային տարբերակով: • Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է պատրաստված լինեն համակարգչային համապատասխան ծրագրերի կիրառման միջոցով, լինեն ընթացիկ:
Հիմնական պարտականություններ և պահանջներ	<p>Հիմնական պարտականություններ՝</p> <ol style="list-style-type: none"> 1 հետազննման աշխատանքների իրականացում, 2 նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում, <p>Հետազննման վերաբերյալ պահանջներ՝</p> <ul style="list-style-type: none"> • հետազննումն իրականացնել նախագծային փաստաթղթերը մշակելու անհրաժեշտ ծավալով, • հետազննման ընթացքում իրականացնել կառուցման տեղամասի առկա վիճակի տեսանկարահանում: <p>Նախագծի նկատմամբ պահանջներ</p> <ul style="list-style-type: none"> • Նախագծային փաստաթղթերը պետք է համապատասխանեն ՀՀ պետական ստանդարտներին, հրահանգներին, քաղաքաշինական նորմերին: • Նախագծում նախատեսել հետևյալ փաստաթղթերը՝ <ul style="list-style-type: none"> ✓ Ինժեներական (էլեկտրասնուցման) համակարգերի նախատեսում ✓ Մարզադահլիճի հատակների փոխում: ✓ դռների և պատուհանների փոխարինում ✓ Նեփին հարդարման աշխատանքներ (պատերի, առաստաղների հարդարում) ✓ Շենքի մուտքային հատվածում նախատեսել թեթահարթան

Նախագծի կազմի նկարմամբ պահանջներ՝

- Նախագծանախահաշվային փաստաթղթերումներառել
 - ✓ Ելակետային տվյալներ՝ ճարտարապետահատակագծային և նախագծային առաջադրանքները,
 - ✓ Չափագրություններ
 - ✓ Բացատրագրեր
 - ✓ Ճարտարապետաշինարարական մաս կոնստրուկտորական մաս, ներքին ինժեներական ցանցերի գծագրեր
 - ✓ *Նախահաշիվ (որն իր մեջ կներառի ամփոփ, օբյեկտային և տեղային նախահաշիվներ)*
 - ✓ *Շինարարության կազմակերպման նախագիծ*
 - ✓ *Նախահաշվի հիման վրա կազմված ծավալաթերթ-նախահաշիվ, որի յուրաքանչյուր աշխատանքի միավորի արժեքը կներառի ՀՀ քաղաքաշինական նորմատիվ փաստաթղթերով սահմանված բոլոր ծախսերը, շահույթը, ինչպես նաև բոլոր տրոփերը, վճարները և հարկերը՝ առանց նախատեսված վերադարձի գումարի, կնքված և ստորագրված նախագծողի կողմից (այդ թվում հաշվի առնել չնախատեսված աշխատանքների և ծախսերի 50%),*

Համաձայնեցումներ՝

- քաղաքաշինական պարզ փորձաքննության եզրակացությունը պետք է լինի դրական,
- նախագծային լուծումները համաձայնեցնել համայնքի ղեկավարի և դպրոցի տնօրինության հետ,
- տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի հետ համաձայնեցնել պահուստի, լցակույտի և շինարարական աղբի տեղերը,

Նորմատիվային պահանջներ

- Նախահաշիվը կազմել ՀՀ կառավարության 23.06.2011թ.-ի թիվ 879-Ն որոշմամբ սահմանված կարգի համապատասխան:
- Նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմել համաձայն ՀՀ-ում գործող նորմատիվային փաստաթղթերի:

Աշխատանքի կատարման ժամկետը

սկիզբը	ավարտը
Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20-րդ օրացուցային օրը ներառյալ:

Չափաբաժին 5

Ոյժ համայնքի դպրոցի պատուհանների և դռների փոխում նախագծային աշխատանքներ

Ծրագրի անվանումը	Ոյժ համայնքի դպրոցի պատուհանների և դռների փոխում նախագծային աշխատանքներ
Ֆինանսավորման աղբյուր	ՀՀ կառավարության 24.08.2017թ N 1070-Ն որոշում
Պատվիրատու	ՀՀ Սյունիքի մարզպետարան
Աշխատանքների անվանումը	Ոյժ համայնքի դպրոցի պատուհանների և դռների փոխում
Աշխատանքի տեսակը	Վերականգնում
Նախագծման փուլը	Աշխատանքային նախագիծ
Ընդհանուր դրույթներ	<ul style="list-style-type: none"> • Նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմել ՀՀ կառավարության 19.03.2015թ. թիվ 596-Ն որոշմամբ «ՀՀ կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» պահանջներին համապատասխան: • Նախահաշիվը կազմել ՀՀ կառավարության 23.06.2011թ.-ի թիվ 879-Ն որոշմամբ սահմանված կարգի համապատասխան: • Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է կազմվեն և ներկայացվեն հայերեն լեզվով, հինգ թղթային օրինակով և մեկ էլեկտրոնային տարբերակով: • Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է պատրաստված լինեն համակարգչային համապատասխան ծրագրերի կիրառման միջոցով, լինեն ընթերցելի:
Հիմնական պարտականություններ և պահանջներ	<p>Հիմնական պարտականություններ՝</p> <ol style="list-style-type: none"> 1. հետազննման աշխատանքների իրականացում, 2. նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում, <p>Հետազննման վերաբերյալ պահանջներ՝</p> <ul style="list-style-type: none"> • հետազննումն իրականացնել նախագծային փաստաթղթերը մշակելու անհրաժեշտ ծավալով, • հետազննման ընթացքում իրականացնել առկա վիճակի տեսանկարահանում: <p>Նախագծի նկարմամբ պահանջներ</p> <ul style="list-style-type: none"> • Նախագծային փաստաթղթերը պետք է համապատասխանեն ՀՀ պետական ստանդարտներին, հրահանգներին, քաղաքաշինական նորմերին: • Նախագծի մեջ պետք է նախատեսել առնվազն հետևյալ աշխատանքները՝ <ul style="list-style-type: none"> ✓ Փոխել փայտյա պատուհանները և պատուհանագոգերը, տեղադրելով նոր մետաղապլաստե պատուհաններ պատուհանագոգերով: ✓ Փոխել փայտյա դռները տեղադրելով նոր մետաղապլաստե դռներ, ✓ Անհրաժեշտության դեպքում նախատեսել մասնակի վերանորոգման աշխատանքներ:

Նախագծի կազմին կազմամբ պահանջներ՝

- ✓ Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է ներառեն՝
- ✓ Ելակետային տվյալներ՝ ճարտարապետահատակագծային և նախագծային առաջադրանքներ,
- ✓ Չափագրություններ
- ✓ Բացատրագրեր
- ✓ Ճարտարապետաշինարարական մաս կոնստրուկտորական մաս, նախահաշիվ (որն իր մեջ կներառի ամփոփ, օբյեկտային և տեղային նախահաշիվներ)
- ✓ Շինարարության կազմակերպման նախագիծ
 - ✓ նախահաշվի հիման վրա կազմված ծավալաթերթ-նախահաշիվ, որի յուրաքանչյուր աշխատանքի միավորի արժեքը կներառի ՀՀ քաղաքաշինական նորմատիվ փաստաթղթերով սահմանված բոլոր ծախսերը, շահույթը, ինչպես նաև բոլոր փոփոխումները, վճարները և հարկերը՝ առանց նախատեսված վերադարձի գումարի, կնքված և ստորագրված նախագծողի կողմից (այդ թվում հաշվի առնել չնախատեսված աշխատանքների և ծախսերի 50%),

Համաձայնեցումներ՝

- քաղաքաշինական պարզ փորձաքննության եզրակացությունը պետք է լինի դրական,
- նախագծային լուծումները համաձայնեցնել համայնքի ղեկավարի և դպրոցի տնօրինության հետ,
- տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի հետ համաձայնեց նել պահուստի, լցակոյտի և շինարարական աղբի տեղերը,

Նորմատիվային պահանջներ

- Նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմել քաղաքաշինական նորմերի պահանջներին համապատասխան:
- Նախահաշիվը կազմել ՀՀ կառավարության 23.06.2011թ.-ի թիվ 879-Ն որոշմամբ սահմանված կարգի համապատասխան:
- Նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմել համաձայն ՀՀ-ում գործող նորմատիվային փաստաթղթերի:


Աշխատանքի կատարման ժամկետը

սկիզբը	ավարտը
Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20-րդ օրացուցային օրը ներառյալ:

Պ Ա Տ Վ Ի Բ Ա Տ ՈՒ

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմ
Ք. Կապան, Գ. Նժդեհ 1
Հ/Հ՝ 900311080049
ՀՎՀՀ՝ 09415375
Երևանի թիվ 1 ԳԲ
Աշխատակազմի ղեկավար
Ռ. Սարգսյան


(ստորագրություն)



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Սեյամշին» ՍՊԸ
Արարատի մարզ, ք. Արտաշատ, Օգոստոսի 23 փ, 21/3ա
Հ/Հ՝ 163048109645
ՀՎՀՀ՝ 04227903
Տնօրեն՝ Ն. Բունիայան

(ստորագրություն)



ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Սչխատանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագրի ու՝ ըստ ԳՄՆ Արասակարգման (CPV)	անվանումը	վճարումները նախատեսվում է իրականացնել 2017 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71241200/3	ՀՀ Սյունիքի մարզի Նորաշենիկ համայնքի մշակույթի տան տանիքի վերանորոգում	110000	110000	110000	110000
2	71241200/3	ՀՀ Սյունիքի մարզի Խղրանց համայնքի ակումբի շենքի տանիքի վերանորոգում	160000	160000	160000	160000
3	71241200/3	ՀՀ Սյունիքի մարզի Արծվանիկ համայնքի դպրոցի մարզադահլիճի վերանորոգում	110000	110000	110000	110000
4	71241200/3	Ծավ համայնքի դպրոցի մարզադահլիճի վերանորոգում	210000	210000	210000	210000
5	71241200/3	Ոյծ համայնքի դպրոցի պատուհանների և դռների փոխում	110000	110000	110000	110000

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

Վ Ա Տ Ա Ր ՈՂ

ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմ

Ք. Կոստանյան, Եզեռի 1

ՀՀ 900311080049

ՀՀ 09415375

Սյունիքի մարզի

Վիճակագրության կենտրոն

Վարչական

Վարչական

(ստորագրված)

«Սեյսմշին» ՍՊԸ

Արարատի մարզ, ք. Արտաշատ, Օգոստոսի 23 փ, 21/3ա

Հ/Հ՝ 163048109645

ՀՎՀՀ՝ 04227903

Տնօրեն՝ Ն. Բունիսյան

Պայմանագրի կողմ

գտնվելու վայրը _____

հհ _____

հվհհ _____

Պատվիրատու

գտնվելու վայրը _____

հհ _____

հվհհ _____

ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄՂՐԱՄԻՍԱՍԻԿԱՏԱՐԱՄԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆԱՆ-ԸՆԴՈՒՄԱՆ

« » « » 20 թ

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն՝ իդենտ _____ և

Պայմանագրի կողմը՝ իդենտ _____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N _____ եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքի					
	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

Աշխատանքն ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

